ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-21/42

ք. Երևան «27» 08 2021թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և «Օլիմպիա» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Ա.Խաչատրյանի,որը գործում է Հնկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել ներկայացուցչական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության __2_____ օրինակ:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է մինչև 400000/Չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի

Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասները այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուն մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման ընթացակարգում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձևակերպել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից առաջացած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է __4__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՏՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԳՄՍ	«Օլիմպիա» ՍՊԸ
Ք.Երևան, Կառավարական տուն 2	Ք. Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 6/10
ՀՀ ՊԵՆ ազգային գործառնական	«Ինեկոբանկ» ՓԲԸ
վարչություն	Հ/Հ2050022105781001
Հ/Հ 900011018562	ՀՎՀՀ 02526829
ՀՎՀՀ 02698732	
Գլխավոր հաշտարարի տեղակալ՝	Տնօրեն՝
_____ Վ. Գասպարյան	_____ Ա.Խաչատրյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1
«27» «08» 2021թ կնքված
թիվ ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-20/42 զնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	Ծառայության							
Չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Քանակը	Առավելագույն ընդհանուր գինը ՀՀ դրամ,	Մատուցման	
							Հասցեն	Ժամկետը
1	79111200/5	Ներկայացուցչական ծառայություններ	Ծառայությունը նախատեսում է Ակոռի ռեստորանում պատվիրակության հյուրասիրության կազմակերպում: Ծառայությունը մատուցվում է Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջարկի հիման վրա՝ Կատարողի կողմից կից ցանկով սահմանված ապրանքների միավոր գներով, որոնք չեն ներառում սպասարկման վճարը: Կատարողի կողմից յուրաքանչյուր անգամ ծառայության մատուցելիս նախատեսվում է նաև սպասարկման վճար՝ տվյալ պահին մատուցված ծառայության գնի 10 %-ի չափով:	դրամ	1	400000	Ք. Երևան, Կենտրոն թաղամաս,Մ Խորենացու փողոցի 6/10 Ակոռի ռեստորան	2021թ. 3-4-րդ եռամսյակների ընթացքում *

* Ծառայության ժամկետը չի կարող ավել լինել, քան ս.թ. դեկտեմբերի 25-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
---------------------------- Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
---------------------------- Ա. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«27» «08» 2021թ. կնքված
թիվ ՀՀԿԳՄՆՄԱԾՁԲ-21/42 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑԱ

ՀՀ դրամ

Ծառայության																
Գնափաթեթի համարը	Գնումների պլանով նախատեսված միջոցների ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին, ըստ ամիսների, այդ թվում*													
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը	
1	79111200/5	Ներկայացուցչական ծառայություններ								400000	400000	400000	400000	400000	400000	

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են անողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Վ. Գասպարյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

---------- Ա.Խաչատրյան
(ստորագրություն) Կ.Տ.

Անվանում	Գին ՀՀ դրամ
1.Սառը խորտիկներ	
Թթվի տեսականի	800
Լոռի պանիր	1200
Կծու բիբար	300
Կանաչու տեսականի	800
Կիտրոն,ձիթապտուղ	1000
Հացի տեսականի	800
Ձկան տեսականի	7000
Ղավուրմա կգ	12000
Մսի տեսականի	6000
Ոչխարի պանիր	1200
Պանրի տեսականի	3000
Ռեժան	1000
Քամած մածուն	800
Թթվասեր	1000
Կարմիր ձկնկիթ 70 գր	8000
2.Աղցաններ	
Աղցան Ակոռի	1500
Աղցան ամառային	1200
Աղցան ավելուկով	1000
Աղցան բրոկոլիյով	1200
Աղցան դանդուռով	600
Աղցան կարմիր լոբով	1000
Աղցան հավով	1000
Աղցան տավարի մսով և հոլանդական պանրով	1500
Աղցան Կեսար	1500
Աղցան թաբուլե	800
Աղցան մայրաքաղաքային	1200
Աղցան հազարով	800
Աղցան թարմ սնկով և լոլիկով	1200
Աղցան Հունական	1500
Աղցան խորոված բիբարով	1000
3. Տաք խորտիկներ	
Բոխչա	3000
Գառան թիակ	7000
Գառի խաշլամա կգ	7000
Խաշած իշխան կգ	4000
Խաշած կարմրախայտ կգ	9000
Խաշած սիգ կգ	4000
Խոզի ժարկո	1800
Խուրջին	2000
Կաթնակեր հորթի թիակ	7000
Կարմրախայտ խմորի մեջ	10000
Կեր ու սուս	2000
Հավի թևիկներ կծու սոուսով	1200
Տավարի շեյկա կգ	7000
Փուռիկ	3000
Հսկա կոտլետ	6000
Պապիկ	4500

Խոզի շեյկա սոուսով	2500
4.Ապուրներ	
Հարիսա	1500
Խաշ	2500
Ավելուկով ապուր	1000
Բորշչ	1000
Բրնձով ապուր	800
Կարմիր լոբով ապուր	1000
Սալյանկա	1500
Թանապուր	800
Չանախ	1700
Կարտոֆիլով,մսով սոուս	1200
5.Տաք ուտեստներ	
Խոզի խորոված (չալաղաջ,մատ,փափուկ) կգ	8000
Ակոռի քաբաբ	1200
Գառի խորոված	1500
Գառան քաբաբ	1300
Ոչխան խորոված կգ	5000
Հավի կրծքամսի խորոված	4000
Խորոված ճուտ	1500
Կաթնակեր հորթի խորոված	2000
Կանաչիյով քաբաբ	1200
Կանեփով քաբաբ	1200
Կծու բիբարով քաբաբ	1200
Կտրտած մսով քաբաբ	1200
Ուրֆայի քաբաբ	1300
Պանրով քաբաբ	1200
Կարմրախայտ խորոված	9000
Հավի խորոված	4000
Սալորչրով կոտլետ կրակի վրա	1200
Մնկով քաբաբ	1200
Ստեռլյադի խորոված կգ	6000
Տավարի չալաղաջ սոուսով կգ	7000
Տավարի սուկի կգ	10000
Տավարի քաբաբ	1000
Դդումի խորոված	500
Սնկի խորոված կգ	4000
Հավի քաբաբ	700
Հավի քաբաբ նաչինկայով	800
6.Խավարտներ	
Արիշտայով փլավ	800
Բրնձով փլավ	800
Բրնձով փլավ ռակի պոչի սոուսով	4000
Լոլիկով ձվածեղ	1000
Հաճարով սնկով փլավ	1200
Բրնձով փլավ սնկի սոուսով	1500
Սպագետի	800
Ուզբեկական փլավ	1700
Սպագետի ռոքֆորի սոուսով	1200
Բաստուրմայով ձվածեղ	1500

7.Ալկոհոլային խմիչքներ		
Օղի Աբյալյուտ		8000
Օղի բելուգա սև		14000
Օղի Գրեյ գուս		20000
Օղի Կոսկենկորվա		7000
Օղի Նեմիրոֆ լեքս		9000
Օղի Ս սերեբրոմ		5000
Օղի Ս սերեբրեմ գոլդ		6000
Օղի Ցարսկայա օրիգինալ		5000
Օղի Ցարսկայա գոլդ		6000
Օղի Ֆինլանդիա		7000
Օղի Բելուգա սպիտակ		11000
Օղի Կրեմլին սև		14000
Օղի Կրեմլին սպիտակ		10000
Օղի Կրեմլին օրգանիկ		15000
Օղի Օհանյան		8000
Օղի Օհանյան այս		9000
Օղի Գոռալ		7000
Օղի Ստոլիչնայա		7000
Օղի Չիստի կրիստալ		5000
Օղի Ստուբրաս		6000
Օղի Ռոմանով		7000
Օղի Մոսկովսկայա		6000
Օղի Արխանգելսկայա		6000
Օղի Տնական		4000
Գինի Արենի		3000
Գինի Արմենիա		4000
Գինի Կարաս կարմիր		8000
Գինի Կարաս սպիտակ		6000
Գինի Վերնաշեն		3500
Գինի Տնական		4000
Գինի Տակառ կարմիր		7000
Գինի Կարաս ռեզերվ		16000
Գինի Քուռ		7000
Գինի Նոյան տապան		5000
Գինի Հին Արենի		5000
Գինի Տակառ սպիտակ		6000
Գինի Իջևան		4000
Կոնյակ Ախթամար		17000
Կոնյակ Ընտիր		13000
Կոնյակ Նաիրի		45000
Կոնյակ Տոնական		28000
Վիսկի Բլեք լեյբլ	50գ	1600
Վիսկի Չիվաս 12	50 գ	2000
Վիսկի Չիվաս 18	50 գ	5000
Վիսկի Ջեք Դենիելս	50 գ	2000
Վիսկի Ռեդ լեյբլ	50 գ	800
Գարեջուր Կիլիկիա		700
Գարեջուր Կիլիկիա		600
Գարեջուր Հեյնիկեն		1000

Գարեջուր Միլլեր	800
Գարեջուր Գյումրի	600
Գարեջուր Արարատ	600
Գարեջուր Ալեքսանդրապոլ	600
Գարեջուր Կրոմբախեր	1000
8.Տաք ըմպելիքներ	
Էսպրեսո	800
Թեյ տարբեր ձևի	1000
Սուրճ արևելյան	300
Սուրճ փարիզյան	400
Սուրճ Յակոբս	400
9.Զովացուցիչ ըմպելիքներ	
Կոլա,ֆանտա,սփրայթ	300
Ջուր,Հանքային խառը	300
Նատախտարի	500
Տնական Կոմպոտ	2000
10.Աղանդեր	
Գաթա տնական	300
Սիգարետ ընկույզով	300
Մրգի տեսականի	3000

"Օլիմպիա" ՍՊԸ Տնօրեն Ա.Խաչատրյան